Ա. Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱԿԱՁՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ (1945—1955 ԹԹ.)

Կոմունիստական շինարարության հարուստ փորձը համոզիչ կերպով վկայում է, որ արտադրության տեխնոլոգիական պրոցեսների անընդհատ կատարելագործումն ու տեխնիկական առաջադիմության արմատավորումն անբաժանելի են սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումից։ Մարդկային հասարակության բովանդակ պատմությունը, նրա դարավոր նյութական հուշարձանները ցույց են տալիս, որ մարդը իր կյանքի ընթացքում անընդհատ կատարելագործել է արտադրության միջոցները՝ քարի գործիքներից սկսած մինչև ժամանակակից ամենաբարդ տեխնիկան։

Սոցիալիզմի պայմաններում համաժողովրդական սեփականության երկու ձևերի առկայությունը լայն հնարավորություններ ստեղծեց արտադրողական ուժերի աննախընթաց զարգացման, տեխնիկական առաջադիմության համար։ Սոցիալիստական հասարակարգի պայմաններում պետությունն իր ձեռքում կենտրոնացնելով արտադրությունն ու կուտակման հիմնական միջոցները, լայն հնարավորություններ է ստեղծում տեխնիկական առաջադիմության անշեղ զարգացման համար։ Տեխնիկական առաջադիմության հարցերը ետպատերազմյան տասնամյակում ամբողջովին դարձան կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ուշադրության ու մտահոգության կարևորագույն հարցերից մեկը։

Հայրենական պատերազմի ավարտից հետո, ժողովրդական տնտեսության զարգացման վերաբերյալ ՍՍՀՄ Գերագույն սովետի 1946 թ. մարտին ընդունած օրենքում մի անգամ ևս ընդգծվեց տեխնիկական առաջադիմության կարևորությունը։ Այդ օրենքում պահանջվում էր ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական առաջադիմությունը, որպես արտադրության հզոր վերելքի և աշխատանքի արտադրողականության բարձրացման կարևոր գործոնի[1]։ Կուսակցությունը և սովետական կառավարությունը մեր ժողովրդի առջև խնդիր դրեցին՝ վերականգնել արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը ոչ միայն նախկին, այլև նորագույն տեխնիկայի մակարդակով։

Ետպատերազմյան տասնամյակում ժողովրդական տնտեսության զարգացման համար ծավալված սոցիալիստական մրցության, արտադրողականության բարձրացման, աշխատատար պրոցեսների մեքենայացման, նորարարության ու ռացիոնալիզացման հարցերը միշտ էլ գրաղեցրել են հանրապետության կուսկազմակերպությունների ուշադրությունը։ Այդ տարիներին տեղի էին ունենում աշխատանքի առաջավոր մեթոդների ուսումնասիրման ու արմատավորման տեխնիկական կոնֆերանսներ, կազմակերպվում էին արտադրության

[1] «Правда», *21 մարտի 1946 թ.։*

առաջավորների հանդիպումներ, որտեղ կատարվում էին փորձի փոխանակումներ, քննարկվում աշխատանքի արտադրողականության բարձրացման, նորարարական և ռացիոնալիզատորական շարժման զարգացման մասին հարցեր։ Հայաստանի կոմկուսի քաղաքային և շրջանային կոմիտեները և բյուրոները հրավիրում էին կուսակցական ակտիվի նիստեր, խորհրդակցություններ, ուր քննարկվում էին տեխնիկական առաջադիմությանը նպաստող հարցեր։ ՀԿԿ Կենտկոմը, քաղկոմներն ու շրջկոմները սիստեմատիկ կերպով ստուգում և ուսումնասիրում էին ինչպես առաջավոր, այնպես էլ ետ մնացող ձեռնարկությունների, կառույցների աշխատանքը, միջոցներ էին ձեռնարկում լավագույն փորձի խրախուսման, տարածման ու արմատավորման, ետ մնացողներին օգնելու, նրանց առաջավորների մակարդակին բարձրացնելու համար։ Բավական է նշել, որ միայն 1946 թ. ընթացքում ՀԿԿ Կենտկոմի պլենումներում և բյուրոյի նիստերում լսվել են արդյունաբերական ձեռնարկությունների և կառույցների աշխատանքի վերաբերյալ 55 հարց[2]։ 1946 թ. հունիսին ՀԿԿ Կենտկոմի պլենումը քննարկեց կուսակցության Լենինականի քաղկոմի և Մարտունու շրջկոմի քարտուղարների զեկուցումները՝ սոցիալիստական մրցության ծավալման մասին։ Պլենումը կուսկազմակերպությունների ուշադրությունը բևեռեց արտադրական պրոցեսների մեքենայացման, ռացիոնալիզատորական շարժման ծավալման, բանվորների որակավորման բարձրացման հարցերի վրա[3]։

Մարդկային հասարակության պրակտիկ փորձը ցույց է տվել, որ տեխնիկական առաջադիմության կարևոր պայմանն արտադրական պրոցեսների էլեկտրիֆիկացումն է։ «Դուք գիտեք,— ասում էր Վ. Ի. Լենինը,— որ այդ հիմքը էլեկտրականությունն է, որ միայն այն ժամանակ, երբ ամբողջ երկիրը, արդյունաբերությունն ու հողագործության բոլոր ճյուղերը կենթարկվեն էլեկտրիֆիկացման, երբ դուք այդ խնդիրը կյուրացնեք, այն ժամանակ միայն դուք կարող եք կառուցել ձեզ համար կոմունիստական հասարակությունը, որը հին սերունդը չի կարողանա կառուցել»[4]։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծել է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը մեր երկրում տապալելով շահագործողներին, քաղաքական իշխանությունը հանձնեց աշխատավորությանը, որով ապահովեց միայն քաղաքական կողմը, «...իսկ տնտեսական կողմը կարող է ապահովել միայն այն ժամանակ, երբ իսկապես ռուսական պրոլետարական պետության մեջ կկենտրոնացվեն ժամանակակից տեխնիկայի հիմունքներով կառուցված խոշոր արդյունաբերական մեքենայի բոլոր թելերը, իսկ դա նշանակում է էլեկտրիֆիկացիա»[5]։

Հաշվի առնելով մարքսիզմի կլասիկների ցուցումներն էլեկտրիֆիկացման տնտեսական հսկայական նշանակության մասին, որպես սոցիալիզմի ու կոմունիզմի նյութատեխնիկական հզոր բազայի ստեղծման, տեխնիկական առաջադիմության կենսագործման կարևորագույն գործոնի, կուսակցությունը և կառավարությունը իրականացնում են տնտեսական-կազմակերպական հսկայական միջոցառումներ երկրի էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Դրա լա-

2 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 36, գ. 37։
3 Նույն տեղում, ց. 35, գ. 4։
4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 351։
5 Նույն տեղում, էջ 527։

վագույն ապացույցն է այն, որ եթե 1913 թ. ցարական Ռուսաստանում արտադրվել էր ընդամենը 2 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, ապա ետպատերազմյան երկրորդ հնգամյակի վերջին այն հասավ 170,1 միլիարդ կիլովատ ժամի[6]։

Այդ նույն ժամանակաշրջանում յուրաքանչյուր չորս օրում ՍՍՀՄ-ում արտադրվում էր այնքան էլեկտրաէներգիա, որքան արտադրվում էր մինչհեղափոխական Ռուսաստանում՝ 1913 թվականին[7]։ Հանրապետության ժողովրդական տնտեսության էլեկտրիֆիկացման ուղղությամբ բավական փորձ էր ձեռք բերել Հայաստանի կոմունիստական կուսակցությունը։ Ելնելով լենինյան այն ցուցումներից, որ առանց էլեկտրիֆիկացման հնարավոր չէ խթանել տեխնիկական առաջադիմությունը, ՀԿԿ Կենտկոմը և կառավարությունը տնտեսական-կազմակերպական միջոցներ ձեռնարկեցին արդյունաբերության և գյուղատնտեսության էլեկտրիֆիկացման ուղղությամբ։ Հանրապետության էլեկտրիֆիկացումը համաժողովրդական գործ էր, որի համար պայքարում էին ոչ միայն կուսկազմակերպությունները, այլև տնտեսական, արհմիութենական և կոմերիտական բոլոր կազմակերպությունները, որոնց ջանքերը պսակվեցին հաղթանակով։ Հինգերորդ հնգամյակի վերջին՝ հանրապետության բոլոր էլեկտրակայանները արտադրեցին 2214,7 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա։ Դա հսկայական նվաճում էր, եթե նկատի ունենանք, որ 1913 թ. Հայաստանում արտադրվել էր ընդամենը 5,1 միլիոն կիլովատ ժամ էլեկտրաէներգիա[8]։

Վերոհիշյալ փաստերը ակնառու կերպով ցույց են տալիս ՀԿԿ տնտեսական, կազմակերպական, քաղաքական-մասսայական հսկայական աշխատանքը հանրապետության էներգետիկ բազայի հզորացման ասպարեզում, բազա, որը հանդիսանում է տեխնիկական առաջադիմության կարևորագույն գործոնը։

Տեխնիկական առաջադիմությունը սերտորեն կապված է աշխատավորների կրթական և կուլտուր-տեխնիկական մակարդակի, արտադրական կադրերի պատրաստման և որակավորման բարձրացման հետ, առանց որի տեխնիկան մեռած է։ Որքան բարձր է բանվորների, ինժեներա-տեխնիկական աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակը, այնքան արագ է արմատավորվում նորագույն տեխնիկան, այնքան էֆեկտիվ ու ինտենսիվ են օգտագործվում արտադրական կարողությունները, որը վերջին հաշվով նպաստում է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը։ Վ. Ի. Լենինը ընդգծելով տեխնիկայի, գիտության, կադրերի դերը արտադրողականության բարձրացման գործում, նշել է. «Առանց գիտության, տեխնիկայի, փորձի զանազան ճյուղերի մասնագետների ղեկավարության, անկարելի է սոցիալիզմին անցնել, որովհետև սոցիալիզմը պահանջում է գիտակից և մասսայական առաջընթաց շարժում դեպի աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն՝ կապիտալիզմի համեմատությամբ և կապիտալիզմի ձեռք բերած հիմքի վրա»[9]։ Ելնելով լենինյան այդ ցուցումից, կուսակցությունը և սովետական կառավարությունը կոմունիստական շինարարության ամբողջ ընթացքում իր ուշադրությունն է բևեռել արտադրական կադրերի պատրաստման և որակավորման

6 Տե՛ս «Народное хозяйство СССР», М., 1956, էջ 71։
7 Նույն տեղում։
8 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 30։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 295։

կենսական խնդրի վրա։ Աշխատավորության կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման համար կուսակցությունը և սովետական կառավարությունը առաջին հերթին սկսեցին զարգացնել ժողովրդական կրթությունը։ Նյութական խոշոր միջոցների ներդրման և կազմակերպական հսկայական ջանքերի շնորհիվ այդ բնագավառում ձեռք բերվեցին զգալի հաջողություններ։ Դրա լավագույն վկայությունն է այն, որ 1940—1941 ուստարում ՍՍՀՄ տարրական, յոթնամյա և միջնակարգ դպրոցներում սովորում էին 35.528 միլիոն մարդ[10], իսկ բուհերում՝ շուրջ 812 հազար ուսանող[11]։ Այդ տարիներին ժողովրդական կրթության ասպարեզում մեծ հաջողություններ ձեռք բերվեցին նաև մեր հանրապետությունում։ Այսպես, եթե մինչև սովետական կարգերի հաղթանակը Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն, ապա երկրորդ հնգամյակի վերջին տարում արդեն գործում էին 13 բուհ, ուր սովորում էին 19,2 հազար ուսանող[12]։

1954—1955 ուստարում հանրապետության հանրակրթական դպրոցներում սովորում էին 295,2 հազար աշակերտ[13]։

Ետպատերազմյան տասնամյակում ՀՍՍՀ-ում զգալիորեն ավելացավ բուհերում, տեխնիկումներում և այլ միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորողների ընդհանուր թիվը։ Այդ ժամանակամիջոցում հանրապետության ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի համար պատրաստվեց շուրջ 40 հազար մասնագետ[14]։ Տեխնիկական առաջադիմությունն ապահովելու համար պահանջվում էր բարձրացնել նաև բանվորների տեխնիկական որակավորումը պետական աշխատանքային ռեզերվների սիստեմի միջոցով։ 1940-ից մինչև 1948 թ. Հայաստանում այդ սիստեմում պատրաստվեցին տարբեր մասնագիտության 16.500 երիտասարդ որակյալ բանվորներ, իսկ միայն 1948 թ. հանրապետության 11 արհեստագործական ուսումնարաններում և ֆաբգործուսի 5 դպրոցներում սովորում էր շուրջ 3000 մարդ[15]։ 1955 թ. միայն ֆաբգործուսի և շինարարական մասնագիտական դպրոցները տվեցին 8,3 հազար որակյալ մասնագետներ[16]։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կուսկազմակերպությունները լավ հասկանալով բանվորների որակավորումը բարձրացնելու կարևոր նշանակությունը, տեխնիկական առաջադիմության արմատավորման, աշխատանի արտադրողականության և արտադրանքի որակի բարձրացման, ինքնարժեքի իջեցման, գերպլանային կուտակումների ստեղծման բնագավառում տնտեսական-կազմակերպական, քաղաքական-մասսայական մեծ աշխատանք ծավալեցին։ Այսպես, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կուսկազմակերպության նախաձեռնությամբ արտադրամասերում ստեղծվեցին տեխմինիմումի դասընթացներ, որտեղ տարեկան իրենց որակավորումը բարձրացնում էին շուրջ 270 երիտասարդ բանվորներ[17]։ 1950 թ. գործարանում

10 Տե՛ս «Народное хозяйство СССР», М., 1956, էջ 222։
11 Տե՛ս Справочник пропагандиста, М., 1956, էջ 375։
12 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 149։
13 Նույն տեղում, էջ 150։
14 Տե՛ս նույն տեղում, էջ 154։
15 Տե՛ս Հաշվետու զեկուցում ՀԿ(բ)Կ 14-րդ համագումարում, 1948, էջ 38։
16 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 120։
17 Տե՛ս «Պարտիական կյանք», 1949, № 9, էջ 49—50։

կար ստախանովյան 7 դպրոց, որտեղ սովորում էին հարյուրավոր բանվորներ[18]։ Գյումուշի հիդրոկայանի շինարարությունում աշխատող 300 թունելագործներից 295-ը մեկ տարվա ընթացքում բարձրացրին իրենց որակավորումը[19]։ 1949 թ. 9 ամիսների ընթացքում անհատական և տեխուսուցման միջոցով Լենինականում 1600 մարդ բարձրացրեց իր տեխնիկական մակարդակը, իսկ 1950 թ.՝ որակավորվեցին շուրջ 3000 բանվոր[20]։ 1955 թ. Երևանի միայն Լենինյան շրջանի արդյունաբերական ձեռնարկություններից երեկոյան դպրոցներում սովորում էին 2415 բանվորներ, իսկ բուհերի ու տեխնիկումների հեռակա բաժիններում՝ ավելի քան 577 բանվորներ և այլ տեխնիկական աշխատողներ։ Գործարաններին կից մասնագիտական դպրոցներում տարբեր պրոֆեսիաների գծով վերապատրաստվեցին շուրջ 3743 բանվոր[21]։

Ետպատերազմյան առաջին երկու հնգամյակների տարիներին Հանրապետության կուսակցական, արհմիութենական, տնտեսական և կոմերիտական կազմակերպությունների ջանքերով որակավորվեցին հազարավոր աշխատավորներ։ Բավական է նշել, որ միայն 1950 թ. որակավորվեցին տարբեր պրոֆեսիաների 35,4 հազար մարդ, որից միայն բանվորներ՝ 24,8 հազար, իսկ 1956 թ. նրանց թիվը հասավ 41,5 հազարի, որից 33,3 հազարը բանվորներ[22]։

Վերը բերված փաստերը ակնառու կերպով ցույց են տալիս կուսակցության և սովետական կառավարության լենինյան ազգային քաղաքականության հոյակապ հաղթանակները, Հայաստանի կուսակցական կազմակերպությունների հսկայական աշխատանքը ազգային տեխնիկական կադրերի պատրաստման գործում։ Ետպատերազմյան տասը տարում պատրաստված կադրերը հիմնականում բավարարեցին զարգացող ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի պահանջը, հատկապես Հանրապետության առավել արագ աճող արդյունաբերության պահանջը։ Անկասկած, Հանրապետության տեխնիկական կադրերի պատրաստման ուղղությամբ ձեռք բերած նվաճումներն ավելի մեծ կլինեին, եթե այդ գործում չլինեին թերություններ ու վրիպումներ։ Հանրապետության որոշ կուսակցական և տնտեսական կազմակերպություններ անուշադրության էին մատնում տեխմինիմումի, առաջավոր փորձը ուսումնասիրող դասընթացների ու խմբերի աշխատանքները, կադրերի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հարցերը, որի հետևանքով ետպատերազմյան տասնամյակում Հանրապետության շատ ձեռնարկություններ դեռ կոմպլեկտավորված չէին համապատասխան մասնագիտություն ունեցող կադրերով, եղածների զգալի մասն էլ չուներ տեսական և տեխնիկական անհրաժեշտ գիտելիքներ։ Այսպես, Լենինականի կարի ֆաբրիկայի 38 ինժեներա-տեխնիկական աշխատողներից միայն երկուսն էին ինժեներ և յոթը տեխնիկներ, իսկ մնացած 29-ը՝ պրակտիկ աշխատողներ էին։ Նման դրություն էր տիրում նաև հացի, մեխանիկական գործարաններում, գուլպա-տրիկոտաժի, մանարան ֆաբրիկաներում և այլ ձեռնարկություններում[23]։ Ահա թե ինչու ՀԿԿ XVI համագումարը կուսակազմակերպությունների առջև խնդիր դրեց Հանրապետության «...ձեռնար-

---

18 Տե՛ս «Սովետական Հայաստան», 31 մայիսի 1951 թ.։
19 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 11։
20 Նույն տեղում, ֆ. 46, ց. 11, գ. 1։
21 Նույն տեղում, ֆ. 1, ց. 83, գ. 30։
22 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 121։
23 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, ց. 7, գ. 114։

կությունները ուժեղացնել ինժեներա-տեխնիկական աշխատողների կադրերով և հասնել այն բանին, որ ձեռնարկություններում ինժեներական պաշտոնները չգրավեն պրակտիկները»[24]։

Աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացումը, անկասկած, իր բարերար ազդեցությունն ունեցավ նորարարական և ռացիոնալիզատորական մտքի զարգացման վրա։ Ծտպատերազմյան երկրորդ հինգամյակում ՍՍՀՄ-ում գյուտարարների և ռացիոնալիզատորների թիվը հասավ շուրջ 5 միլիոն մարդու, որոնք արել էին մոտավորապես 9,5 միլիոն առաջարկություն։ Ծտպատերազմյան տասնամյակում նորարարական և ռացիոնալիզատորական գործում որոշակի ներդրում կատարեցին մեր Հանրապետության առաջավոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։ Կուսակցական կազմակերպությունների գլխավորությամբ Հանրապետության ռացիոնալիզատորների առաջարկությունների տնտեսական էֆեկտը միայն 1949 թ. կազմեց շուրջ 16105 հազար ռուբլի[25], իսկ 1950 թ.՝ 19221 հազար ռուբլի[26]։ Հինգերորդ հնգամյակի տարիներին ավելի լայն թափ ստացավ նորարարությունն ու գյուտարարությունը։ Միայն Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանում ամբողջ հինգերորդ հնգամյակի ընթացքում գյուտարարական և ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրումից ստացվեց ավելի քան 30 միլիոն ռուբլու օգուտ։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական կազմակերպությունները գլխավորում և աջակցում էին նորարարական և ռացիոնալիզատորական մտքի զարգացմանը։ Բազմաթիվ փաստերից վերցնենք մի քանիսը։ Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի կուսակցական կազմակերպությունը տնտեսական-կազմակերպական որոշակի աշխատանք կատարեց տեխնիկական պրոցեսների կատարելագործման, նորարարական ու ռացիոնալիզատորական գործը բարելավելու բնագավառում։ Հինգերորդ հնգամյակի տարիներին գործարանի նորարարներն ու կոնստրուկտորները մշակեցին և արտադրության մեջ ներդրեցին միասնական սերիայի սինխրոն, ՍԳ—35 և ՍԳ—60 գեներատորների ավտոմատիկ կարգավորումների կոնստրուկցիաները, կատարելագործեցին մամլակային տնտեսությունը, գործարկեցին ավագացայտիչ խցիկը, կազմակերպեցին էլեկտրոդների, արդուկների և լամպերի տուփերի պատրաստման աշխատամասեր[27]։ Գործարանի կուսակցական, արհմիութենական, կոմերիտական կազմակերպությունները, առաջավոր բանվորներն ու ինժեներա-տեխնիկական կազմը չբավարարվեցին այդ բնագավառում ձեռք բերած նվաճումներով և սկսեցին նոր եռանդով աշխատել տեխնիկական առաջադիմության կենսագործման ուղղությամբ։

Հինգերորդ հնգամյակի վերջին տարիներին յուրացվեց տրանսֆորմատորների երեք նոր տեսակների, հարյուր կիլովատից բարձր լարման վահանների, ՊԵՍ—75—Մ կատարելագործված կոնստրուկցիայի շարժական ենթակայանների և լայն սպառման համար էլեկտրաիրերի սերիական թողարկում։ Բարելավվեցին ու կատարելագործվեցին գլանակավոր առանցքակալների նստեց-

24 «Հայաստանի կուսակցության պատմության ուրվագծեր», 1963, էջ 592։
25 Տե՛ս ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 46, ց. 7, գ. 114։
26 Տե՛ս «Հաշվետու զեկուցումը Հայաստանի Կ(բ)Կ XVI համագումարում», 1952, էջ 33։
27 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 85, գ. 305։

ման, ՍԳ—60 գեներատորների խոզանակային տրավերսների, ՏՄ—560/10 տրանսֆորմատորների ընդարձակիչ բակերի կոնստրուկցիաները։ Տեխնիկական նման կատարելագործման շնորհիվ ստացվում էին տնտեսական զգալի օգուտներ։ Այսպես, ՍՏ—60 տիպի գեներատորի յուրացման շնորհիվ տնտեսվեց հազար տոննա դինամիկ պողպատ, որից լրացուցիչ պատրաստվեց 2500 գեներատոր[28]։ 1954 թ. 9 ամիսների ընթացքում ներդրված 74 առաջարկությունները տվեցին 975 հազար ռուբլու օգուտ[29]։ Տեխնիկական առաջադիմության բնագավառում կատարված վերափոխումների ու այլ միջոցառումների շնորհիվ 1954 թ. առաջին 9 ամսվա համախառն արտադրանքի պլանը կատարվեց 105,2 տոկոսով, իսկ ապրանքային արտադրանքի պլանը՝ 109 տոկոսով։ Աշխատանքի արտադրողականությունը 1954 թ., 1953 թ. նույն ժամանակամիջոցի համեմատությամբ, աճեց 23,5 տոկոսով[30]։

Ետպատերազմյան տասնամյակում տեխնոլոգիական պրոցեսների զգալի վերափոխումներ տեղի ունեցան Հայաստանի քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում։ Այսպես, Ալավերդու քիմիական գործարանի կուսկազմակերպությունը ամբողջ կոլեկտիվի առջև խնդիր դրեց՝ մեքենայացնել քիմիկատների արտադրամասի կենտրոնաթափ ագրեգատի բարձրացման և դատարկման պրոցեսները։ Կուսկազմակերպության գլխավորությամբ գործարանի ռացիոնալիզատորները սկսեցին աշխատել այդ ուղղությամբ և տքնաջան աշխատանքը տվեց իր դրական արդյունքը։ Գործարանի նորարար Վ. Օհանյանի առաջարկությամբ պատրաստվեց մի հարմարանք, որի միջոցով կենտրոնաթափ ագրեգատի վրա հումքի բարձումն սկսեց կատարվել մեքենայացված ձևով։ Նոր հարմարանքի տեխնոլոգիան յուրացնելուց հետո այդ ագրեգատի վրա աշխատողների թիվը կրճատվեց երեք միավորով, երկուսից-երեք անգամ երկարացվեց մեքենայի կարևոր մասերի օգտագործման տևողությունը, զգալիորեն կրճատվեց նաև օժանդակ նյութերի ծախսումը[31]։ Շնորհալի ռացիոնալիզատոր Վ. Օհանյանը 1952—1953 թթ. ընթացքում արել էր 25 նորարարական առաջարկություն, որը գործարանին տարեկան բերում էր 200 հազար ռուբլու տնտեսում[32]։ Նույն գործարանի վառարանի վարպետներ Լ. Գալստյանը, Մ. Ղազարյանը տեխնոլոգիայի կատարելագործման շնորհիվ չլուծվող նյութերի քանակը մնացորդի մեջ իջեցրին կիսով չափ։ Արագացնելով եփման պրոցեսը՝ վարպետներ Ա. Մոսինյանը և Ե. Զուրաբյանը միաժամանակ նույն գոր մեջ կատարեցին մնացորդի կրկնակի եփում, որով մոտ 50 տոկոսով կրճատվեց հումքի կորուստը[33]։

Էլեկտրաէներգիան տնտեսելու համար Երևանի Կիրովի անվան քիմիական գործարանի կուսակցական կազմակերպությունը մոբիլիզացրեց ձեռնարկության նորարարական ու ռացիոնալիզատորական ուժերը տեխնոլոգիական պրոցեսների այնպիսի բարեփոխումների համար, որպեսզի հնարավորության չափ կրճատվի էլեկտրաէներգիայի ծախսումը։ Մշակվեցին շուրջ 300 հրահանգչական քարտեր, ուր ընդրկվեցին արտադրության հիմնական պրոցեսնե-

28 Նույն տեղում, ֆ. 1, ց. 81, գ. 35։
29 Նույն տեղում, ց. 85, գ. 305։
30 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 85, գ. 305։
31 Տե՛ս «Պղնձի ֆրոնտում», № 9, 1954։
32 Նույն տեղում, № 49, 1953։
33 Նույն տեղում, № 25, 1953։

ը։ Միայն 1953 թ. արվեցին 850 նորարարական և ռացիոնալիզատորական առաջարկություններ, որից արտադրության մեջ ներդրվեցին 600-ը[34]։ Կուսակցական, արհմիութենական, տնտեսական կազմակերպությունների ջանքերով հինգերորդ հնգամյակի վերջին տարիներին ավտոմատացման ենթարկվեցին Կիրովի անվան քիմիական գործարանի գրեթե բոլոր հիմնական արտադրական պրոցեսները։ Արտադրանքի յուրաքանչյուր մեկ միավորի համար, 1950 թ. համեմատությամբ, երկու անգամ բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը և 27,6 տոկոսով ավելացավ մեկ բանվորի արտադրողականությունը[35]։

Տեխնոլոգիական նման բարեփոխություններ էին տեղի ունենում հանրապետության քիմիական արդյունաբերության բոլոր ձեռնարկություններում։

Ետպատերազմյան տասնամյակում հանրապետության գունավոր մետալուրգիայի ձեռնարկությունների կոլեկտիվների առջև ծառացած էին արտադրական ռեզերվների ու սարքավորումների լիակատար օգտագործման, տեխնիկական առաջադիմության, արտադրության տեխնոլոգիական պրոցեսների բարելավման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և այլ կարևոր խնդիրներ։

Ետպատերազմյան առաջին երկու հնգամյակների տարիներին այդ խնդիրների լուծմանն էին ուղղված Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի և Զանգեզուրի հանքվարչության կուսակազմակերպությունների ջանքերը։ Գործարանի կոնստրուկտորների, ռացիոնալիզատորների ուժերով ամբողջովին ավտոմատացվեց արտացոլիչ վառարանը, վերակառուցվեցին կոնվերտորի օդամղիչ անցքերը, որը կրճատեց ձուլման մեկ պրոցեսի տևողությունը, մեքենայացվեց խոնավ բովախառնուրդի փոխադրումը, որը նպաստեց ագրեգատների ռիթմիկ աշխատանքին։ Այդ միջոցառումների շնորհիվ պղնձի թողարկման առաջադրանքը գերակատարվեց, աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 6 տոկոսով, իսկ մեկ միավորի արտադրությունը շուրջ 25 տոկոսով[36]։

Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի կոլեկտիվը, կուսակազմակերպության գլխավորությամբ, արտադրական պրոցեսների կատարելագործման շնորհիվ, հասավ տնտեսական զգալի նվաճումների։ Բավական է նշել, որ 1954 թ. առաջին եռամսյակում ձուլողները ու հանքափորները համախառն արտադրանքի պլանը կատարեցին 121,3 տոկոսով։ Աշխատանքի արտադրողականությունը պլանի դիմաց բարձրացավ 19,2 տոկոսով։ Այդ նվաճումների համար Ալավերդու պղնձաձուլական կոմբինատն արժանացավ ՍՍՀՄ գունավոր մետալուրգիայի մինիստրության երրորդ կարգի մրցանակին[37]։

Ղափանի հանքվարչության Ս. Մ. Կիրովի անվան ֆլոտացիոն ֆաբրիկայում լայն ծավալ էր ստացել գյուտարարությունն ու ռացիոնալիզատորությունը։ Բավական է նշել, որ միայն 1951 թ. ընթացքում արտադրության մեջ կիրառված առաջարկությունների օգուտը կազմեց 700 հազար ռուբլի[38]։ Ֆաբրիկայի վարիչ, կոմունիստ Ա. Ժուրբենկոյի ռացիոնալիզատորական երեք

34 ՄԼԻ Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 85, գ. 200։
35 Նույն տեղում, ֆ. 1, ց. 81, գ. 35։
36 Տե՛ս «Պղնձի ֆրոնտում», № 41, 1954։
37 Նույն տեղում, № 37։
38 Տե՛ս «Պղնձի համար», № 3, 1952։

առաջարկությունների կիրառման շնորհիվ, ֆաբրիկան տարեկան ունեցավ 600 հազար ռուբլու օգուտ։ Կոմունիստներ Մ. Ավետիսյանի, Կ. Մարտիրոսյանի, Վ. Մեսրոպյանի և շատ ուրիշների արած ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրմամբ բարելավվեց արտադրության տեխնոլոգիան, խնայվեց հումք և էլեկտրաէներգիա։ Ֆլոտացիոն ֆաբրիկան 1951 թ. պլանը կատարեց 104,6 տոկոսով, կոնցենտրատի թողարկումը՝ 104,9, կոնցենտրատի մեջ պղնձի պարունակությունը՝ 119,8, հանքաքարի կորզումը՝ 100 տոկոսով, երկրին տալով պլանից ավելի կոնցենտրատ[39]։

Տեխնոլոգիական պրոցեսների մեքենայացման ու ավտոմատացման բնագավառում նման վերակառուցումներ ու բարեփոխումներ էին տեղի ունենում նաև հանրապետության մյուս հանքավարչություններում և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկություններում։

Նոպատերազմյան առաջին երկու հնգամյակների տարիներին վերընթաց զարգացող ծանր արդյունաբերության բազայի վրա տեխնիկական զգալի առաջադիմություն տեղի ունեցավ հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններում։ Այդ բնագավառում ուսանելի փորձ ունի Լենինականի տեքստիլ կոմբինատի կուսկազմակերպությունը։ Կոմբինատում նոր թափ ստացավ նորարարական և ռացիոնալիզատորական աշխատանքը։ Մանվածքային ֆաբրիկայում ռացիոնալիզատորների առաջարկությամբ վերակառուցվեցին զզող մեքենաները, սանրող արտադրամասի բոլոր մեքենաների վրա դրվեցին ժապավեն խտացնող հարմարանքներ, որը բարձրացրեց ժապավենների որակը։ Էլեկտրամեքենաշինական արտադրամասի նորարար Լ. Քարամյանի ջանքերով մշակվեց շարժիչների ռոտորները վերականգնելու հատուկ տեխնոլոգիա, որը հնարավորություն տվեց օգտագործել գործածությունից դուրս եկած էլեկտրաշարժիչները և հաստոցները։ Զուլարանի արտադրամասի պետ, ռացիոնալիզատոր Վ. Կոշտոյանի առաջարկությամբ մշակվեց գերհզոր թուջի ձուլման նոր տեխնոլոգիա, որի կիրառումով ձուլած մասերի դիմացկունությունը բարձրացավ երկու անգամ, իսկ ձուլման տևողությունը կրճատվեց 50 տոկոսով[40]։ Այդ միջոցառումները հնարավորություն տվեցին ժապավենա-նախամանող արտադրամասում աշխատանքի և սարքավորումների արտադրողականությունը բարձրացնել 15—18 տոկոսով, բարելավել կիսաֆաբրիկատի որակը և հեշտացնել բանվորի աշխատանքը[41]։

Ներկման-վերամշակման ֆաբրիկայի օդափոխիչների երկաթյա ծածկոցները ավելի արագ և հեշտ պատրաստելու համար փականագործ Ա. Վիզոյանը կաղապարող մեքենայի վրա ստեղծեց մի այնպիսի հարմարանք, որը 10—15 անգամ ավելացրեց արտադրանքի թողարկումը[42]։ Մանվածքային ֆաբրիկայի վերանորոգման բաժնի պետ Հ. Ավետիսյանը մեկ տարում արեց 18 ռացիոնալիզատորական առաջարկություն, որոնց կիրառումից ստացված պայմանական օգուտը կազմեց 100 հազար ռուբլի[43]։ Միայն 1955 թ. 11 ամիսների ընթացքում կոմբինատի վարպետները, արտադրամասերի պետերը և ինժեներա-տեխ-

39 Նույն տեղում։
40 «Մանածագործ», № 21, 1953։
41 Նույն տեղում, № 49։
42 «Մանածագործ», № 2, 1955։
43 Նույն տեղում, № 7։

նիկական աշխատողները արեցին 121 նորարարական և ռացիոնալիզատորական առաջարկություն, որոնցից արտադրության մեջ ներդրվեց 101-ը։ Այդ առաջարկություններից ստացված տարեկան պայմանական օգուտը, կազմեց 837.826 ռուբլի[44]։

Ետպատերազմյան առաջին երկու հնգամյակի տարիներին հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ տեխնիկական առաջադիմությանը էական օգնություն ցույց տվեցին գիտահետազոտական հիմնարկներն ու բարձրագույն ուսումնական հաստատությունները։ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի, Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի և պետական համալսարանի բնական գիտությունների շատ մասնագետներ, համագործակցելով բանվորների ու ինժեներա-տեխնիկական աշխատողների հետ, մշակում և արտադրության մեջ արմատավորում էին նոր տիպի բազմաթիվ մեխանիզմներ, նյութերի ստացման նոր եղանակներ, որոնք արմատական փոփոխությունների էին ենթարկում տեխնոլոգիական շատ պրոցեսներ։ Ակադեմիայի երկրաբանության և քիմիայի ինստիտուտներն իրենց գիտական արժեքավոր նորարարություններով զգալի օգնություն ցույց տվեցին հանրապետության գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ձեռնարկություններին։ Հրաէներգետիկայի և շինությունների ու կառուցվածքների ինստիտուտները գիտահետազոտական հետաքրքիր աշխատանքներ էին կատարում Գյումուշի հիդրոկայանում։

Արտադրության մեջ տեխնիկական առաջադիմության գործում զգալի աշխատանք կատարեցին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական, հիդրոտեխնիկական և քիմիական ֆակուլտետների գիտական աշխատողները՝ հանրապետության մեքենաշինական, մետաղամշակման և քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում, Երևանի պետական համալսարանի ֆիզիկական քիմիայի ամբիոնի աշխատակիցները՝ Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատում և այլն։

Այսպիսով, հինգերորդ հնգամյակի տարիներին տեխնիկական առաջադիմության բնագավառում խոշոր քայլեր են կատարվում Հայաստանի արդյունաբերության բոլոր ճյուղերում և ձեռնարկություններում։ Որպես սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման օբյեկտիվ օրինաչափության դրսևորում, տեխնիկական առաջադիմության արմատավորումը կատարվում է պլանաչափ և սիստեմատիկ կերպով, տնտեսական շահավետության և համախառն արտադրանքի անընդհատ աճման, արտադրության աշխատողների կողմից աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք մշակելու նշանաբանով։

Ետպատերազմյան տասնամյակում, մասնավորապես հինգերորդ հնգամյակի վերջին տարիներին, հագեցվում էին հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները նորանոր մեքենաներով ու նորագույն սարքավորումներով։

Ավելի քան 396 ժամանակակից նոր մեքենաներ ու սարքավորումներ տեղադրվեցին Լենինականի տրիկոտաժ ֆաբրիկայում[45]։ Հինգերորդ հնգամյակի չորս տարիների ընթացքում ՍՍՀՄ արդյունաբերությունը ամեն տարի միջին հաշվով ստանում էր 26 միլիարդ ռուբլու նոր սարքավորում։ Մետաղահատ

44 Նույն տեղում, № 48։

45 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 80, դ. 279։

հաստոցների ընդհանուր ոլորտը ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության մեջ 1955 թ. սկզբին 1950 թ. համեմատությամբ ավելացավ 2,4 անգամ։ Աշխատանքի էլեկտրաֆինվածությունը խոշոր արդյունաբերության մեջ 1954 թ. 1950 թ. համեմատությամբ աճեց 30 տոկոսով և երկու անգամ ավելի բարձր էր, քան 1940 թվականին։ Տեխնիկական առաջադիմության հետագա զարգացման համար շրջադարձային էտապ հանդիսացավ ատոմային էներգիայի օգտագործումը ժողովրդական տնտեսության մեջ։ 1954 թ. մեր երկրում սկսեց գործել պատմության մեջ առաջին ատոմային էլեկտրակայանը։

Ետպատերազմյան տասնամյակում խոշոր չափով զարգացավ հանրապետության արտադրության միջոցների արտադրությունը։ Այսպես, ՀՍՍՀ խոշոր արդյունաբերության արտադրանքը 1955 թ. 1913 թ. համեմատությամբ աճեց 41 անգամ[46], իսկ մեքենաշինության և մետաղամշակման արտադրանքը՝ 289 անգամ[47]։

Վերը շարադրված փաստերը ակնառու կերպով ցույց են տալիս այն հսկայական տեղաշարժերը, որ տեղի են ունեցել մեր հանրապետությունում, ետպատերազմյան տասնամյակում՝ տեխնիկական առաջադիմության ասպարեզում։

Սակայն տեխնիկական առաջադիմության բնագավառում ձեռք բերված խոշոր հաջողությունների կողքին դեռևս գոյություն ունեին զգալի թերություններ։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության արդյունաբերական որոշ ձեռնարկություններում, կոնստրուկտորական բյուրոների և գիտա-տեխնիկական խորհուրդների կողմից միշտ չէ, որ պատշաճ խորությամբ ուսումնասիրվում էին նորարարների, ռացիոնալիզատորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների կողմից արված որոշակի արժեք ունեցող առաջարկությունները, հաճախակի ձգձգվում էր տնտեսական կարևոր էֆեկտ ունեցող ռացիոնալիզատորական առաջարկությունների ներդրումը։ Սիստեմատիկ և հետևողականորեն չէին պրոպագանդվում միութենական ձեռնարկությունների առաջավոր, համընդհանուր հավանության արժանացած աշխատանքային փորձն ու մեթոդները։ Հանրապետության արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում լրիվ չափով չէին օգտագործվում մեքենաների ու սարքավորումների կարողությունները, որոշ ձեռնարկությունների ղեկավարները դիմադրում էին հին տեխնիկան նորով փոխարինելուն։ Մեքենաների, սարքավորումների և տեխնոլոգիական պրոցեսների կատարելագործման տեմպերը ետ էին մնում արտադրության զարգացման և ժողովրդական տնտեսության պահանջների աճման տեմպերից։ Հաճախ թողարկվում էին հնացած կոնստրուկցիայի հաստոցներ, անբավարար էր ձուլման սարքավորումների արտադրությունը։ Լիովին չէր կիրառվում արտադրության կոմպլեքսային մեքենայացումն ու ավտոմատացումը, անբավարար էին մեքենայացվում արտադրության օժանդակ պրոցեսները։

Ետպատերազմյան տասնամյակում տեխնիկական առաջադիմության բնագավառում եղած վերոհիշյալ թերությունների կարևոր պատճառներից մեկը

46 Տե՛ս «Советская Армения за 40 лет», 1960, էջ 44։
47 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 24։
48 Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 52։
49 Տե՛ս «Народное хозяйство Арм. ССР», 1957, էջ 25։

անձնական շահագրգռվածության և խթանման նկատմամբ ցուցաբերվող որոշակի անտարբերությունն էր։ Գրեթե մոռացվել էր Վ. Ի. Լենինի դրույթը այն մասին, որ անցումը դեպի կոմունիզմ պետք է կատարվի «ոչ թե անմիջական խանդավառության վրա հենվելով, այլ մեծ հեղափոխության ստեղծած խանդավառության օգնությամբ, հենվելով անձնական շահի, անձնական շահագրգռվածության, տնտեսական հաշվարկի վրա... այլ կերպ դուք չեք մոտենա կոմունիզմին, այլ կերպ դուք տասնյակ ու տասնյակ միլիոնավոր մարդկանց չեք մոտեցնի կոմունիզմին»[50]։

Վերոհիշյալ թերությունների վերացումը ժողովրդական տնտեսության զարգացման հաջորդ հնգամյակներում դարձան կուսակցական, արհմիութենական, կոմերիտական և տնտեսական կազմակերպությունների կարևոր խնդիրներից մեկը։

50 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 46—47։